կազմէն, – դիւրաւ և լաւագոյն կարենան հետեւիլ դէպքերու յառաջխաղացութեան։

Կը ստիպուինք, սակայն, գիրքիս ընթերցողները զգուշացնել անոր կրօնական թիւր ըմբռնումներէն, որոնք քանի մը տասնեակ տարիներէ ի վեր որոշ շրջանակներու բնաբաններն են կարծես։ Առնենք հատ մը. «Հետու մեզանից նաեւ քրիստոնէութիւնը, ստուածապաշտութիւնը, որ կործանեց, քանդեց, Հայն ու Հայաստանը և մեզ հասցրեց այս օրերին» (էջ 281)։ Բայց միթէ այդ հայը «քանդող», «հէքեաթներ, առասպելներ» պատմող քրիստոնէութիւնը չէ՞ որ փրկեց իսլամական ծովին մէջ ինկած հայութեան գոյութիւնը։

Ուրիշ տեղ կ'ըսէ. «Ներդաշնակությունը դաստիարակության և կրթության դառնում է մեր նպատակը։ Այս գծի մեջ են ընկնում նաև վանքերի և մենաստանների դպրոցները։ Այս հիմնարկություններից, հակառակ հայ եկեղեցու հնամենի սովորության, այսուհետև դուրս պիտի չգան աբեղաներ, քահանաներ ու վարդապետներ, այլ մարդիկ, որոնք իրենց շունչը պիտի ձգեն յեղափոխության գանձարկղը» (էջ 311)։ (Ընդգծումները մեզմէ)։

Եթէ հայը այսօր քաղաքակիրթ աշխարհի դիմաց կրնայ պարծիլ իր պատմութեամբ, կը պարտի զայն իր վանքերուն գրական ու գեղարուեստական նուաճումներուն։ Հայ վանքերը երկար դարեր եղած են միակ իսկական կեդրոնները հայ մշակոյթին։ Անոնց ուսումնական անկումը ճշմարիտ քրիստոնէական հոգիին նուազելէն է և ոչ թէ այդ կրօնքին խեղճութեան հետեւանք մը։ Բանանք Աւետարանները, պիտի տեսնենք որ Քրիստոս իր նախընտրութիւնները իր ազգին տուած է։ Վերլուծենք Ս. Պօղոսի վարքը, որ հեթանոսներու առաքեալ կոչուած է, պիտի տեսնենք որ միշտ մնացած է նախ և առաջ հրեայ, նոյնիսկ երբ իր ազգէն կը հալածուէր։ Մեր Ս. Հայրերու օրինակն ալ ցոյց կու տայ, թէ քրիստոնէութիւնը չէ տկարացուցած անոնց մէջ հայը. նոյնիսկ եթէ Ս. Ներսէս Լամբրոնացին առնենք, որ կ'ուզէր եւրոպական զարգացումը իւրացնել, բայց երբեք հայութիւնը ուրանալ։ Ուստի հետեւցնել թէ քրիստոնէութիւնը քանդած ըլլայ հայութիւնը, բացէ ի բաց անհեթեթութիւն մը հաստատել է։

Կը մաղթենք որ պարոն Ռէն, դեռ շատ գիրքեր արտադրէ, ուր իր մտքին կորովը դեռ աւելի փայլի, սրբագրելով սակայն անճշտութիւններէ և զուարթ ջիղ մը մտցնելով՝ որպէսզի աւելի հրապուրիչ և զանազանեալ ըլլան։ Կը մաղթենք իրեն աւելի մօտէն քննել քրիստոնէութիւնը, որպէսզի ըմբռնէ թէ հայ վանքերը պէտք է դառնան իրենց ծաղկեալ վիճակին և արտադրեն շատ ճշմարիտ հայ աբեղաներ, իսկական հայ վարդապետներ, որոնք հայ կուսակցութեան անհրաժեշտ լրացուցիչ տարրերն են։ Եթէ մօտէն հետեւի չի կրնար ուրանալ՝ որ միայն ճշմարիտ քահանան կարող է տարբեր քաղաքական ուղղութիւններու հետեւող հարազատ եղբայրները համոզել, յարգելու իրարու գաղափարական ազատութիւնը և մնալ լաւ եղբայրներ։

Հ. ՅՈՒՍԻԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ

ՀՍՍՌ-Арм ССР ... им. А. Мясникяна

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱԶԱՏԵԱՆ ԹՈՐՈՍ. – Լիբանանեան յուշեր. Իսթանպուլ, 1949, էջ 224։

ԱԻԵՏԻՍԵԱՆ ԵԻՓԻՄԷ (Անայիս). – Յուշերս. Փարիզ, 1949, էջ 349։

ԳԱՌՆԻԿ Թ. – Հայ մտքին թափօրը. Փարիզ, 1949, էջ 85 + Ե։

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ. – Ահա քեզի Ամերիկան (Ա. Հատոր). Պոսթոն, 1949, էջ 576։

ԹԱԳԷՈՍԵԱՆ ՅՈՎՍԷՓ. – Քրիստափոր Միքայէլեան. Թեհրան, 1949, էջ 56։

ԹԵՐԶԵԱՆ ՄԵՍՐՈՊ վրդ. – Զմմառու Հայ վանքը. Պէյրութ, 1949, էջ 127 + ԻԳ։

ԹՈՒՐԻԿԵԱՆ Գ. – Եփրատեան Հայաստան. – Քղի եւ շրջ. գաւառները (Ա. Հատոր). Փարիզ, 1947, էջ 334։

ԻՇԽԱՆ Մ. – Կեանք ու երազ. Պէյրութ, 1949, էջ 87։

ԾՈՅԻԿԵԱՆ Ս. Մ. – Հայուն սիրտը (վէպ). Նիւ Եորք, 1949, էջ 214։

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՈՆ եպսկ. – Լուսաշող դէմքեր – Կեանք եւ խորհուրդ. Պոսթոն, 1949, էջ 163։

ՆԱԶԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ Արքեպսկ. – Քահանայական շնորհքը արծարծելու պարտականութիւն եւ միջոցներ. Պէյրութ, 1949, էջ 420 (20 օրինակ)։

ՇԱՀԱՆ. – Գիրք մատուցման եւ հատուցման. Պոսթոն, 1949, էջ 160։

ՍԱՍՈՒՆԻ Կ. – Գրական գոհարներ. Պէյրութ, 1949, էջ 523։

ՍԻՄՈՆԵԱՆ ԼԵՒՈՆ Ա. – Զմայլանք եւ երգ երգոց. Պէյրութ, 1949, էջ 96։

ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ. – Արեւ – Անձրեւ. Պէյրութ, 1933, էջ 94։

— Ոսկի կամուրջ. Պէյրութ, 1946, էջ 132։

ՎՐԱՑԵԱՆ ՍԻՄՈՆ. – Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ. Պոսթոն, 1941, էջ 272։

— Հայրենիք Տարեգիրք – Տօնացոյց. 1943, 1948. Պոսթոն։

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ՅՈՎՆԱՆ Գ. – Ջեղծումապատում. Իսթանպուլ, 1950, էջ 48։

ՕՀԱՆԵԱՆ ԱՆԴՐԷ Տ. – Անցած օրերի շղթան. Թեհրան, 1949, էջ 293։

***

*ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆ* Նկարիչ-Բանաստեղծ – Հրտ. Արշ. Ֆէթ.-ի Յոբել. Կեդր. Յանձնախումբի. Նիւ Եորք, 1949, էջ 44։

*ԴԻՒԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ*. Հտ. Ա եւ Բ. – Հրտ. Հ. Յ. Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէի. Պոսթոն, 1934, էջ 395. 1938, էջ 464։

*ՀԱՅ ԵՐԻՏ. ՄՇԱԿՈՒԹ. ՄԻՈՒԹԻՒՆ*, 1944–1949. – Թեհրան, 1949։

*ՄԵՐ ԱՆՆՄԱՆ ՏՂԱՔԸ*... Մատենաշար «Յուսաբեր» Թ. 45. Գահիրէ, 1950, էջ 17։

*ՕՐԱՑՈՅՑ* 1950 թուականին Քրիստոսի. Երուսաղէմ, 1950, էջ 224։

*ՕՐԱՑՈՅՑ «ԳՈՅԱՄԱՐՏ»* 1950. – Հրտ. Մարսէյլի Հ. Յ. Դ. «Նոր Սերունդ»ի։

*ՕՐԱՑՈՅՑ «ԵՐԿԻՐ»* 1950. – Հրտ. Առաքել Բաբլոյեան. Թեհրան։

*ՕՐԱՑՈՅՑ «ԷՐՕՍ»* 1950. – Հրտ. Ն. Ստեփանեան եւ Ս. Յովհաննիսեան, Թեհրան։

*ՕՐԱՑՈՅՑ «ՆԱԻԱՍԱՐԴ»* 1950. – Հրտ. «Յուսաբեր»ի. Գահիրէ։

*ՕՐԱՑՈՅՑ ԳԱՇՄԱՆԵԱՆ* 1950. – Նիւ Եորք։

*Morgan Jacques (de)*. – The history of the armenian People (tr. by Ernest F. Barry) Boston, 1949, pg. 430.

*Mécérian J., S. I.* – Bulletin Arménologique (Mélanges de l'Univ. S. Joseph, Beyrouth. T. XXVII, Fasc. 10). Beyrouth, 1949, pg. 181–311.

*Salmaslian Armenag.* – La clause de la Nation la plus favorisée. Paris, 1921, pg. 141.

*Vratzian Simon.* – Rosdom. Boston, 1950, pg. 52.

*Armenian youth Federation* of America. Boston. 1949, pg. 66.

*Virginie Mamoulian.* – 1949.

# ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Զուից. Ֆր.

1. ՍՐԲԱԿԵԱՑ ՄԱՆՈՒԿՆԵՐ. – Շմիթմայր. *Փունջ մը կենսագրութիւններ* . . . 0·75
2. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԻ ՄԸ. – Էրնէսթ Տրուէն. – *Ընտանեկան վաւերագիրներէ հանուած պատմութիւն* . . . . . . . 0·50
3. ՄԱՔՈՒՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ. – Թօթ Թիհամէր. – *Մտերիմ խրատներ պատանիներու* . . . . . . . . . . . 1·—
4. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ. – Յ. Շրիվէր. – *Մտածութիւններ հոգեւոր առանձնութեան* . . . . . . . . . 1·50

*ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ*

ԱԻԵՏԱՐԱՆ. – Աշխարհաբար (*պատկերազարդ*)

*ԼՈՒՍԱՆՈՐՈԳՆ ՄԽԻԹԱՐ*

*ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿ*

*ԵԻՍԵԲԻՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ*

*ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ՝ տարուան մը* «Բազմավէպ» *կը նուիրեն ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԱՆՁԱՊԵՏԵԱՆԻ, Պաղտատ։*

© National Library of Armenia